

տուժեան վիճակն, կը խնդրենք Ձեր բարոյական աջակցութիւնն, ամէն վանքեր և հաստատութիւններ միշտ նպաստներ, կտակներ կտանան, իսկ այս վանք ինկած մի անկիւն մոռացութեան տրուած է կարծես. շնորհ ջրէք խմբագրական մը նուիրել և այնու բարեսէրներու գթութիւնն հրաւիրել այս Մենաստանին վրայ և կործանման վիճակէն ազատել զայն, արձան անմոռաց կանգնելով Ձեզ այս աշխարհին մէջ. վանահայրական փոխանորդ Ս. Կարապետի Մշոյ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԵԱԿՈԲԵԱՆ.

Ի. Պ. ԿՕՏԼԵԱՐՆԻՍԿԻ

Խմբագրութիւնս հրաւէր ստացաւ Պօլտաւայի քաղաքագլխից ներկայ լինելու ուկրաինեան գրականութեան նոր շրջանի բանաստեղծ նահապետ Ի. Կօտլեարեսկու արձանի բացման հանդիսին, որ տեղի է ունենալու այս օգոստոս ամսի 30 և 31-ին Պօլտաւա քաղաքում:

Կօտլեարեսկին (1769—1838) մայրոսական գրող է և նորա գրուածներէց աւելի յայտնի են՝ Վիրգիլիոսի «էնէականը» մայրօսականի դարձրած, և օպերէտներ «Մօսկալ Զարիմիկ» և «Նատալկա Պօլտաւկա», որոնք բոլորն էլ տպուած են բաղմաթիւ տպագրութիւններով:

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Շատ վաղուց յայտնի է, որ «Մշակ» ասած սուտ ազատամիտ, սուտ ազգասէր, սուտ յառաջադէմ և սուտ ուղղամիտ թերթի համար ամեն բան պայմանական է և ամեն սրբութիւն անձնական և նեղ կուսակցական շահերի տեսակետից է չափուում այդ թերթում:

Այսօր մի «Вакъ» թերթ երկու սիրալիր խօսք գրեց «Մշակի» հասցէին, իսկ «Вакнинскія Извѣстія» ընդհակառակը համարձակութիւն ունեցաւ ցոյց տալու «Մշակի» անկման նշանները—և ահա այդ թերթը իւր անցօր միջոցներով ամեն ճիգ գործ է դնում շողորթութելու մի թերթին և տապալելու միւսին: Ահա այսպիսի նեղ և միանգամայն վատ զգացմունքից գրողած մի յօդուած է նուիրել «Մշակը» իւր այս տարուայ № 139 մէջ հանգուցեալ Բագուեցի Առաքել Ապօր մահուան մասին տեղի ունեցած խօսակցութիւնների առիթով: Այդ թերթի անատուն հրապարակախօսը, որ ինքն իրան մի հազարիկեշաքեամմա է երևակայում, իւր սովորական զրոյցների մէջ տեսէր թէ ինչպիսի ամարդի խօսերով է դատապարտում հանգու-



ցեալ խեղճ քրիստոնէի մահը: «Մշակը» ասում է որ «իւրաքանչիւր» զո՛Տ անարդարութիւնից չէ առաջանում, և շարունակում է թէ Առաքել Ապերը իրան սպանեց որովհետեւ ւնե՛ծ ախորժակ ունէր», որովհետեւ չկամեցաւ բաւականանալ Հարիւր Հազարներով և այլն և այլն: Եւ այս պատճառով յօդուածագրի խօսքերով այսպիսի մահը ոչինչ Հասարակական նշանակութիւն չունի: Նաև պ. Լ. յեղաշրջում է լրագիրներնեբի մէջ եղած փաստերը: Լրագիրներում տեղեկութիւն կար, որ Հանգուցեալ Ապերը վշտացած էր իւր մի բարեկամի պահանջից ծախելու մի շատ նշանաւոր կայք շնչին դնով պարտքի տեղ: Այստեղ ազատութիւնը չէ շարժառիթը, որ մի առաքինի ծերունի յուսահատուէր: Ոչ, հազար անգամ ոչ: Այստեղ մարդը վշտանում է աշխարհի կեղծիբից, բարեկամի դաւաճանական մտքերից և մարդկանց սամարութիւնից: Երբոր դուք տարիներ ընթացքում լաւութիւն էք տեսնում մէկից և նրան նեղութեան օրերին ձրգտում էք նրան խեղդել, դուք բարոյական հրէշ էք և ձեր պատակերը կարող է վիրաւորել մարդու լաւագոյն զգացմունքները և յուսահատութեան հասցնել: Եւ որ զլիաւորն է, «Մշակի» ամբողջ յօդուածը զրուած է ի պաշտպանութիւն դաւաճան միլիոնների: Խօսք կար լրագրներում, որ պահանջ անողը եղել է մի ուրիշ միլիոնատէր: Ուրեմն դատապարտել և ետական համարել մի համեստ և մեռած մարդու ի նպաստ կենդանի մնացած միլիոնատիրոյ, որ զուցէ իւր գործերը Առաքել Ապերից աւելի ճարպիկ տանել զիտէ—սա ոչ մի տղամարդութիւն չէ: «Մշակի» յօդուածագիրը շատ լաւ գիտէ որ լրագիրները պնդում են թէ Հանգուցեալի գրած նամակներում իւր բարեկամի դաւաճան նպատակների մասին տեղեկութիւն կար, ուրեմն մեղադրել զո՛Տին կնշանակէ պաշտպանել դահճին: Եւ գիտէք, ընթերցողներ, ի՛նչու է «Մշակը» այսպէս վարւում: Որովհետեւ Հանգուցեալ Ապրը եղեունական մահը ողբադող առաջինը եղաւ Բաբուայ «Вавинскія Извѣстія» թերթը, որին «Մշակը» կամենում է իբր թէ տապալել և միշտ այդ թերթի դէմ ամեն կերպ աշխատում է գրել: Այո, «Մշակը» սկսել է պաշտպան հանդիսանալ այնպիսի գաղափարներ և մարդկանց, որ իւր անկումը անխուսափելի դարձնի Բաբուն այնպիսի մի քաղաք է, ուր օժիտի հաշիւներում խաբուած աֆէրիստները արդարութեան սուտ պաշտպան են հանդիսանում իրանց սրտի կսկիծը դատարկելու համար, սուտ փեսացու ձևանալով պաշտօններ են ստանում և յետոյ խաբում բարեկամներին, ուր տարիներով փեսացու են լինում, իսկ վերջը հրաժարւում և հանգիստ խղճով ապրում և մարդու հաշուի մէջ լինում, թէև նրանց պատճառով խաբուած օրիորդը անձնասպանութիւն էլ գործած լինի և այս բոլորը օր գերելով է կատարւում, ուր վաշխառուները բարեգործի անուն են հանում, ուր սուտը, կեղծաւորութիւնը և խաչագողութիւնը անպատիժ թագաւորում է: Եւ ահա «Մշակը» գալիս է պախարակելու այն



լրագիրը թէև առանց անունը յիշելու, որ քաջութիւն ունեցաւ այս ազեղ երևոյթները կամաց կամաց մերկացնել, Մի՛թէ այս չի նշանակոււմ, որ լրագիրը կորցրել է ուղին և չգիտէ ում պաշտպանի կամ ում պախարակի:

Ձեր համակրողներից մէկը:

**Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿՍՅՈՒ ԻՆՆՀԱՐԻԻՐԱՄԵԱԿ**

Այս տարի լրանում է մեր «Տրեշտակակրօն» բանաստեղծ ա. Գրիգոր Նարեկացու մահուան իննհարիւրամեակը, որի առթիւ մի գեղեցիկ յօդուած է նուիրել «Իւզանդիօն» հայաթերթը իւր 2031 համարում:

Ո՛վ ծանօթ չէ այդ պաշտելի անուան, ով բերան չգիտէ գէթ մի բանի տուն հանրածանօթ «Նարեկ» աղօթագրքից, որ ինչպէս ասում է յիշեալ յօդուածագիրը, «ամեն կրօնասէր Հայու համար երկրորդ Աւետարանի մը արժէքն ունի»:

Ս. Գրիգոր Նարեկացին թաղուեցաւ իւրանուն վանքի մէջ Շատախի կողմերը և վերջը նորա նշխարները, որպէս սրբի մասունք, տարուեցան այս և այն կողմերը: Այժմ գրեթէ որոշ յայտնի չէ նորա գերեզմանը, որպէս զի ի յիշատակ այս մեծ յօբելեանի՝ գէթ մի մահարձան կանգնեցնէինք նորա շիրմի վերայ, միայն ցոյց են տալիս աւանդութեամբ մի տեղ, ուր պիտի թաղուած լինի նա:

Բայց եթէ չենք կարող մահարձանով կամ մի մեծ տօնախմբութեամբ պատուել նորա յիշատակը՝ գէթ անմահացնենք հոգիացեալ բանաստեղծին նորա կեանքի և երկասիրութեանց մի հիմնական և լուրջ ուսումնասիրութեամբ:

**«ԼՈՒՍԱՐԵՐ ԳՐԱԿԱՆ ՀԱՒՎՔԱԾՈՅ» ԿԻՊՐՈՍՈՒՄ**

Կիպրոսի Նիկոսիա քաղաքից մեզ հանդորդում են որ Հայաստանեայց քրիստոնէական լուսաւորութեան և Ս. Էջմիածնի մայր տաճարի հիմնարկութեան Հազարվեցհարիւրամեակի յիշատակին՝ Կիպրոսի Ազգային Կրթարան—Որբանոցի տրպարանից ներկայ տարւոյս ընթացքում պիտի հրատարակուի **ԼՈՒՍԱՐԵՐ** տիտղոսով մի հատոր,—հաւաքածոյ ազգային, եկեղեցական, պատմական, բարոյական և բանասիրական ուսումնասիրութեանց հետևեալ ծրագրով:

1. Քրիստոնէութեան ազդեցութիւնը արդի քաղաքակրթութեան վրայ:
2. Ս. Գրիգոր Լուսաւորչի կեանքը և գործունէութիւնը: